



**«ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորական եզրակացություն
- 6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 7 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
- 8 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 9 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- 10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Նավասարդ Շինարար» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության Ղեկավարությունը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Նավասարդ Շինարար» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՄ):

Կարծիքի հիմք

Աուդիտին անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2024թ. ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2025թ. դեկտեմբերի 15-ին արտահայտել է վերապահումով կարծիք:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հնկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հնկերությունը լուծարելու կամ Հնկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում

ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ

30 հունիսի, 2026թ.

Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար



Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	426,417	598,761
Ոչ նյութական ակտիվներ			
Հետաձգված հարկային ակտիվներ	5	49,386	95,018
Փոխառություններ	6	745,193	705,382
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		-	10,308
		1,220,996	1,409,469
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	110,412	364,629
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	716,405	145,249
Տրված փոխառություններ	6	-	1,000
Դրամական միջոցներ	9	2,080	3,838
		828,897	514,716
Ընդամենը ակտիվներ		2,049,893	1,924,185
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	10	18,805	15,805
Որպես սեփական կապիտալի գործիքներ		(498,119)	(469,189)
դասակարգված ածանցյալ գործիքներ			
Սեփական կապիտալի այլ տարեր		(22,734)	(22,734)
Կուտակված շահույթ/վնաս		496,411	81,039
		(5,637)	(395,079)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	11	123,217	245,500
Ֆինանսական վարձակալություն	12	237,620	310,564
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	-
		360,837	556,064
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	11	221,744	162,705
Ֆինանսական վարձակալություն	12	40,007	26,973
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	1,355,493	1,556,150
Շահութահարկի գծով պարտավորություն		77,449	17,372
		1,694,693	1,763,200
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		2,049,893	1,924,185

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. հունիսի 30-ին՝

Տնօրեն

Հաշվապահ

Ա. Դավթյան

Ա. Նահապետյան

Ֆինանսական հաշվետվություններում կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ
 ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2025թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Իրացումից հասույթ	14	4,540,145	3,026,711
Վաճառքի ինքնարժեք	16	(3,646,233)	(2,726,523)
Համախառն շահույթ		893,912	300,188
Այլ եկամուտ	15	2,507	4,033
Իրացման ծախսեր	17	(1,808)	(2,004)
Վարչական ծախսեր	18	(255,166)	(155,490)
Այլ ծախսեր	19	(45,532)	(17,977)
Գործառնական գործունեությունից օգուտ		593,913	128,750
Ֆինանսական ծախս	20	25,391	(51,548)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	21	372	3,795
Շահույթ մինչև հարկերը		619,676	80,997
Շահութահարկի գծով ծախս	22	(149,171)	(22,972)
Տարվա շահույթ		470,505	58,025
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ		470,505	58,025

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Սեփական կապիտալի այլ տարեր	Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգվ ած ածանցյալ գործիքներ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2024թ. Հունվարի 1-ի դրությամբ	8,805	(22,734)	(376,286)	53,466	(336,749)
Կանոնադրական կապիտալի ավելացում	7,000	-	-	-	7,000
Տարվա շահույթ	-	-	-	58,025	58,025
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	58,025	58,025
Հիմնադիրին տրված փոխառության զեխչումից	-	-	(92,903)	-	(92,903)
Շահաբաժիններ	-	-	-	(30,452)	(30,452)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	15,805	(22,734)	(469,189)	81,039	(395,079)
Կանոնադրական կապիտալի ավելացում	3,000	-	-	-	3,000
Հիմնադիրին տրված փոխառության զեխչումից	-	-	(28,930)	-	(28,930)
Տարվա շահույթ	-	-	-	470,505	470,505
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	470,505	470,505
Շահաբաժիններ	-	-	-	(55,133)	(55,133)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,805	(22,734)	(498,119)	496,411	(5,637)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայ. իրացումից	5,009,440	3,349,951
<i>Գործառնական այլ գործունեությունից</i>	41,006	418
<i>Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր</i>	5,050,446	3,350,369
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր</i>		
Նյութեր, ապրանքների ձեռքբերման գծով	(3,017,583)	(2,212,732)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	(566,758)	(626,010)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(614,924)	(394,428)
Վճարումներ բյուջե և սոցիալական ապահովագրության հիմնադրամ	(560,296)	(217,713)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(187,762)	(34,105)
<i>Ընդամենը Գործառնական գործունեությունից ելքեր</i>	(4,947,323)	(3,484,988)
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	103,123	(134,619)
<i>Ներդրումային գործունեությունից մուտքեր</i>		
Ոչ ընթացիկ նյութական և նյութական ակտիվների իրացումից		
Փոխառությունների տրամադրումից	429,432	321,659
<i>Ընդամենը Ներդրումային գործունեությունից մուտքեր</i>	429,432	321,659
<i>Ներդրումային գործունեությունից ելքեր</i>		
Ոչ ընթացիկ նյութական և նյութական ակտիվների ձեռքբերման գծով	(24,369)	(32,014)
Փոխառությունների տրամադրումից	(427,024)	(543,206)
<i>Ընդամենը Ներդրումային գործունեությունից ելքեր</i>	(451,393)	(575,220)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցներից զուտ հոսքեր	(21,961)	(253,561)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր</i>		
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից	3,000	7,000
Ստացված վարկերից և փոխառություններից	649,741	1,142,166
<i>Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր</i>	652,741	1,149,166
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր</i>		
Շահաբաժիններից	(55,133)	-
Ստացված վարկերից և փոխառություններից մարումից	(680,635)	(778,652)
Վճարված տոկոսներ	-	-
<i>Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր</i>	(735,768)	(778,652)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	(83,027)	370,514
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(1,865)	(17,666)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունը	107	498
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	3,838	21,006
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	2,080	3,838

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն»), ստեղծվել է 2009 թվականի նոյեմբերի 18-ին: Ընկերության գրանցման համարն է 80.110.01308:

Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ: Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, «Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և կանոնադրությամբ:

Ընկերության հիմնական գործունեությունը հանդիսանում է բնակելի և հասարակական համաշինարարական աշխատանքների կատարումը:

Ընկերության միակ մասնակիցն է՝

Արման Դավթյան՝ 100 տոկոս,

Ընկերության կառավարման բարձրագույնը մարմինն Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը:

2025թ. Ընկերության աշխատակիցների թվաքանակը կազմել է 126 մարդ (2024թ.՝ 110 մարդ):

Ընկերության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մամիկոնյանց փ. 24/2:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Ընկերությունը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Հնկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և, որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հնկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

2.6 Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

- ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.
 - բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Հնկերությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը) օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը.
 - գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.
 - դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով անուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես գործառնական, ստացված տոկոսները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:
 - ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.
- Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Հնկերությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անհրաժեշտ է:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հնկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին

փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները:

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	4.87	3.71
ԱՄՆ դոլար	381.36	396.56
Եվրո	449.01	413.89

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչմանը, չափվում է սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է:

Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցները սկզբնական ճանաչումից հետո հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	20 տարի,
Մեքենաներ և սարքավորումներ	1-5 տարի,
Համակարգչային տեխնիկա	1-5 տարի,
Տրանսպորտային միջոցներ	8 տարի,
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	1-8 տարի,
Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ են լիցենզիաները և թույլտվությունները, արտոնագրերը, ապրանքային նշանը, համակարգչային ծրագրերը և այլն, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույքաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

3.4 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գույք գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն բոլոր այն դեպքերում, երբ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները փոխանցվում են Հնկերությանը: Բոլոր այլ վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները վարձակալության սկզբի դրությամբ ճանաչվում են որպես Հնկերության ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքով (կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե այն ավելի ցածր է): Վարձատուի համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:

Վարձավճարները բաշխվում են ֆինանսական վճարների և վարձակալության պարտականության նվազեցման միջև այնպես, որպեսզի ստացվի հաստատուն դրույք՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական վճարները հանվում են շահույթը կամ վնասը չափելիս: Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվները ներառվում են հիմնական միջոցներում և մաշեցվում են ու արժեզրկումից կորստի գծով գնահատվում են այնպես, ինչպես սեփականության իրավունքով պահվող ակտիվները:

Գործառնական վարձակալության գծով վճարման ենթակա վարձավճարները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ գծային հիմունքով, համապատասխան վարձակալության ժամկետի ընթացքում:

3.6 Պաշարներ

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Ձեռքբերման ծախսումներն են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային գեղջերը, գների իջեցումները և նմանատիպ այլ հոդվածներ հանվում են:

Վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները, պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են վերամշակելու ընթացքում:

Այլ ծախսումները ինքնարժեքում ներառվում են այն չափով, ինչքանով դրանք կատարվել են պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը Մուտք՝ Առաջինը Ելք» (ԱՄԱԵ) մեթոդով:

Պաշարների ինքնարժեքի մեջ չեն ներառվում գերնորմատիվային ծախսումները, պահպանման ծախսումները, վարչական վերադիր ծախսումները և վաճառքի ծախսումները:

Պաշարները հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար մինչև իրացման գուտ արժեք և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք տեղի են ունեցել:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով:

Պատրաստի շենքեր

Պատրաստի շենքերը ներառում են բնակարաններ, ավտոկայանատեղիներ, հասարակական նշանակության տարածքներ, որոնց արժեքը որոշվում է միջին կշռված մեթոդով՝ ելնելով շենքի ինքնարժեքի և վաճառքի համար նախատեսված տարածքների հարաբերակցությունից:

Անավարտ շենքեր

Անավարտ շենքերն իրենցից ներկայացնում են կառուցման մեջ գտնվող անավարտ անշարժ գույք՝ բնակարաններ, ավտոկայանատեղի և այլն, որոնք կառուցվել են կապալառուների կողմից: Անավարտ շենքերի արժեքը ներառում է հողի կամ շինությունների արժեքը, որոնք ձեռք են բերվել կամ ներդրվել են մասնակիցների կողմից որպես կանոնադրական կապիտալի համալրում: Անավարտ շենքերի արժեքը ներառում է նաև կապալառուներից ստացված աշխատանքների արժեքը, ինչպես նաև կառուցմանը վերագրվող ուղղակի և վերադիր ծախսումները:

3.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն գեղջվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հողվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընկերությունը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հողվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Ընկերությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

-նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

-տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

3.8 Հասույթ

Ընկերությունը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրական գեղջերի, ժամկետից շուտ վճարման գեղջերի և քանակային զիջումների գումարները:

Ընկերությունը ապրանքների վաճառքից ստացվող հասույթը պետք է ճանաչի, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը:

բ) Ընկերությունը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ընկերության հասույթը հիմնականում առաջանում է բնակելի և հասարակական համաշինարարական աշխատանքների կատարումից:

3.9 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց Ընկերության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումներն են.

ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

բ) հետաշխատանքային հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո.

գ) աշխատակիցների այլ երկարաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի հետաշխատանքային հատուցումներից և ազատման նպաստներից), որոնք ոչ ամբողջությամբ են մարվում այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

դ) ազատման նպաստներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք կամ՝

- ընկերության որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ

- աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.10 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե

արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Մեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4 Հիմնական միջոցներ

հազար դրամ	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական տնտեսական գույք, այլ	Ֆինանսական ստացված միջոցներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2024թ. հունվարի 1-ի դրությամբ Ավելացում	3,742 -	149,679 31,804 (764)	156,783 126,670 (1,436)	29,673 357,822 -	339,877 516,296 (2,200)
Օտարում, դուրսգրում	-	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ավելացում	3,742 -	180,719 24,133 -	282,017 39,182 (232,064)	387,495 18,907 -	853,973 82,222 (232,064)
Օտարում, դուրսգրում	-	-	-	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,742	204,852	89,135	406,402	704,131
<i>Կուտակված մաշվածություն</i>					
2024թ. հունվարի 1-ի դրությամբ Տարվա ծախս, Օտարում	2,088 745 -	48,214 34,275 (597)	75,407 55,139 (579)	5,739 34,781 -	131,448 124,940 (1,176)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Տարվա ծախս	2,833 408 -	81,892 32,855 -	129,967 130,327 (221,524)	40,520 80,436 -	255,212 244,026 (221,524)
Օտարում	-	-	-	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,241	114,747	38,770	120,956	277,714
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	909	98,827	152,050	346,975	598,761
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	501	90,105	50,365	285,446	426,417

Մաշվածության գծով ծախսը 2025թ. կազմել է 244,026 հազ. դրամ, որից 2,769 հազ.դրամը բաշխվլ է վարչական ծախսերին, 241,257 հազ.դրամը արտադրական ծախսերին:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 72,650 հազ. դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով (2024թ. 22,318 հազ.դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

5 Հետաձգված հարկային ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեկգրի մնացորդ	95,018	77,649
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	(45,632)	17,369
Տարեվերջի մնացորդ	49,386	95,018

Հետաձգված հարկային ակտիվները վերաբերում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում ներառված աշխատակիցների չօգտագործված արձակուրդային օրերի մնացորդին:

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետաձգված հարկերը խմբավորում են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2025թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ	2025թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Անավարտ աշխատանքների ծախսագրման գծով	56,696	52,499	-	109,195
Դեբիտորական պարտքեր	1,755	-	-	1,755
Փոխառության գծով	100,002	(13,729)	6,350	92,623
Արձակուրդի պահուստ	7,574	719	-	8,293
	166,027	45,839	6,350	211,866
<i>Հետաձգված հարկային պարտավորություն</i>				
Փոխառության գծով	3,231	(3,231)	-	-
Անավարտ արտադրանքների հատույթի ճանաչման գծով	67,678	95,080	-	162,758
Հիմնական միջոցների գծով	100	(378)	-	(278)
	71,009	91,471	-	162,480
Զուտ արդյունք	95,018	(51,982)	6,350	49,386

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետաձգված հարկերը խմբավորում են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Անավարտ աշխատանքների ծախսագրման գծով	-	56,696	56,696
Դեբիտորական պարտքեր	-	1,755	1,755
Փոխառության գծով	83,857	16,145	100,002
Արձակուրդի պահուստ	-	7,574	7,574
	83,857	82,170	166,027
<i>Հետաձգված հարկային պարտավորություն</i>			
Փոխառության գծով	6,208	-	3,231
Անավարտ արտադրանքների հասույթի ճանաչման գծով	-	67,678	67,678
Հիմնական միջոցների գծով	-	100	100
	6,208	64,801	71,009
Զուտ արդյունք	77,649	17,369	95,018

6 Տրված փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Փոխառություններ</i>				
Փոխառություններ	-	1,000	1,259,039	1,260,947
Պահուստ	-	-	(513,846)	(555,565)
	-	1,000	745,193	705,382

7 Պաշարներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք, նյութեր	106,064	358,715
Անավարտ աշխատանք	-	156
Ապրանքներ	4,348	5,758
Այլ նյութեր	-	-
	110,412	364,629

8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	301,190	79,102
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(7,550)	(9,750)
	293,640	69,352
Տրված կանխավճարներ	356,680	14,002
Այլ դեբիտորական պարտքեր	66,085	61,895
	716,405	145,249
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	-	-
	716,405	145,249

9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկդ	-	964
Բանկային հաշիվներ (դրամային)	2,080	2,874
Բանկային հաշիվներ (արտարժույթային)	-	-
	2,080	3,838

10 Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանոնադրական կապիտալ	18,805	15,805
	18,805	15,805

Կանոնադրական կապիտալը կազմում է 18,805 հազ. դրամ, որը բաժանված է 1 հատ 18,805,000 ՀՀ դրամ անվանական արժեքով բաժնեմասերից, որոնք տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են վերը նշված մասնակիցներին:

Ընկերությունը 2025թ. հայտարարել է 55,133 հազ.դրամ շահաբաժին:

11 Վարկեր և փոխառություններ

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Վարկեր և փոխառություններ</i>				
Վարկեր	179,746	162,705	123,217	95,511
Փոխառություններ	41,000	-	-	167,937
Չկրած տոկոսային ծախսեր	-	-	-	(17,9480)
Փոխառության մասով Չկրած տոկոսային ծախսեր	998	-	-	-
վարկերի մասով				
	221,744	162,705	123,217	245,500

«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Պայմանագիր	Արժույթ	Պայմանագրի գումար	Հաշվարկված տոկոս	Տոկոսադրույք	Մնացորդ	Մարման ժամկետ
0181	ՀՀ դրամ	54,000,000	155,887.4	14	40,085,342	19.04.2024թ.
0190	ՀՀ դրամ	68,990,000	213,145	14	54,808,793	22.08.2029թ.
0192	ՀՀ դրամ	158,403,562	482,807.3	14	124,150,476	23.07.2029թ.
0206	ՀՀ դրամ	45,518,438	140,630	14	36,161,917	22.08.2029թ.

«Յունիբանկ» ՓԲԸ

Պայմանագիր	Արժույթ	Հաշվարկված տոկոս	Տոկոսադրույք	Մնացորդ	Մարման ժամկետ
065-100-25SPPI10	ՀՀ դրամ	22,325	14	5,075,778	19.04.2024թ.
65-2806-24SPPI10	ՀՀ դրամ	44,859	14	6,879,643	22.08.2029թ.
65-2805-24SPPI10	ՀՀ դրամ	39,071	14	5,991,952	23.07.2029թ.

12 Ֆինանսական վարձակալություն

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Լիզինգ</i>				
Լիզինգ	72,470	56,076	355,993	407,421
Չկրած տոկոսային ծախսեր	(32,463)	(29,103)	(118,373)	(96,8570)
	40,007	26,973	237,620	310,564

Պայմանագիր	Արժույթ	Մնացորդ	Հաշվարկված տոկոս	Տոկոսադրույք	Մարման ժամկետ
2205 280	ՀՀ դրամ	5,207,745.3	66,345.2	15	30.06.2026թ.

13 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	473,277	525,403
Ստացված կանխավճարներ	624,798	891,104
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	183,588	87,520
Աշխատավարձի գծով պարտք	2,819	768
Արձակուրդի գծով պահուստ	46,075	42,080
Կրեդիտորական պարտքեր շահաբաժնի գծով	-	187
Այլ կրեդիտորական պարտքեր	24,936	9,088
	1,355,493	1,556,150

14 Հասույթ

2025թ. հասույթը կազմել է 4,540,145 հազ. դրամ (2024թ.՝ 3,026,711 հազ. դրամ):

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների վաճառքից հասույթ	106,821	77,795
Աշխատանքների կատարումից հասույթ	4,433,324	2,948,916
	4,540,145	3,026,711

15 Այլ եկամուտներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նյութական վնասի փոխահատուցումից եկամուտ	-	418
Հիմնական միջոցի օտարումից եկամուտ	-	250
Այլ եկամուտ	2,507	3,365
	2,507	4,033

16 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված ապրանքների ինքնարժեք	75,860	74,731
Աշխատանքների կատարման ինքնարժեք	3,570,373	2,651,792
	3,646,233	2,726,523

17 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	-	-
Վարձակալական ծախսեր	-	-
Վարձակալված ՀՄ-ների վառելիքի և սպասարկման ծախսեր	-	-
Մարկետինգի և գովազդի ծախսեր	1,808	2,004
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	-	-
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	-	-
Բանկային ծախսեր	-	-
Ապահովագրական ծախսեր	-	-
Այլ ծախսեր	-	-
	1,808	2,004

18 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	206,789	94,995
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	6,228	6,241
Գործուղման և Ներկայացուցչական ծախսեր	7,902	21,197
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	480	160
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	311	279
Առուղիտրական և խորհրդատվական ծախսեր	17,600	13,382
Բանկային ծառայության և ապահովագրական ծախսեր	4,737	7,051
Վարձակալության գծով ծախսեր	5,500	9,289
Զփոխահատուցվող հարկերից ծախսեր	4,526	984
Այլ ծախսեր	1,093	1,912
	255,166	155,490

19 Այլ ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տույժ, տուգանքներից ծախսեր	18,355	5,381
Արտաթույթի փոխարկման ծախսեր	628	1,693
Անհուսալի դեբիտորական պարտքերի դուսգրումից	-	9,750
Հիմնական միջոցի օտարումից ծախսեր	-	165
Արձակուրդի գծով ծախս	-	-
Այլ ծախսեր	26,549	988
	45,532	17,977

20 Ֆինանսական ծախս

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարկերի գծով տոկոսային ծախս	110,920	133,791
Տոկոսային եկամուտ	(136,3110)	(82,243)
	(25,391)	51,548

21 Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը</i>		
Դրամական միջոցներ	107	497
Դեբիտորական պարտքեր	-	3,922
Տրամադրված փոխառություններ	-	-
Վարկեր	-	(22)
Կրեդիտորական պարտքեր	265	(610)
	372	3,787

22 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	97,189	19,948
Հետաձգված հարկ	51,982	3,024
	149,171	22,972

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	619,676		80,997	
Շահութահարկ 18% (2024թ. 18 տոկոս)	111,542	18.00	14,579	18.00
Չնվազեցվող ծախսեր	37,629	6.07	8,393	10.36
Շահութահարկի գծով ծախս	149,171	24.07	22,972	28.36

23 Ֆինանսական գործիքներ

23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.10-ում:

23.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	293,640	77,854
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,080	2,875
Տրված փոխառություններ	745,193	706,382
	1,040,193	787,111

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Ֆինանսական վարձակալություն	277,627	337,537
Վարկեր և փախառություններ	344,961	408,205
Առևտրային կրեդիտորական պարտքեր	473,277	535,446
	1,095,865	1,281,188

24 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտաբժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

24.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտաբժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտաբժույթով, հետևաբար ենթարկվում է արտաբժույթային ռիսկին: Արտաբժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունը հիմնականում առաջանում է դրամական միջոցներից, վարկերից, ֆինանսական վարձակալությունից, առևտրային կրեդիտորական պարտքերից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դիմական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

25 Կապիտալի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 11-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա:

Հաշվարկը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	(5,637)	(395,079)
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(2,080)	(3,838)
Կապիտալ	(7,717)	(398,917)
Ընդհանուր սեփական կապիտալ	(5,637)	(395,079)
Վարկեր և փոխառություններ	344,961	408,205
Ընդհանուր ֆինանսավորում	339,324	13,126
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	(0.02)	(30.39)

26 Պայմանականություններ

26.1 Գործարար միջավայր

Համաշխարհային տնտեսությունը շարունակում է գործել բարձր անորոշության պայմաններում՝ պայմանավորված աշխարհաքաղաքական լարվածությամբ, տարածաշրջանային հակամարտություններով և ֆինանսական շուկաների տատանումներով: Մասնավորապես, Ուկրաինայի շուրջ զարգացումները, ինչպես նաև Մերձավոր Արևելքում շարունակվող լարվածությունը, շարունակում են ազդել համաշխարհային տնտեսական ակտիվության, ներդրումային հոսքերի և սպառողական վարքագծի վրա:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ակտիվությունը վերջին տարիներին պահպանել է աճի միտում, սակայն շարունակում է ենթարկվել արտաքին գործոնների ազդեցությանը՝ ներառյալ փոխարժեքի տատանումները, գնաճային ճնշումները և տարածաշրջանային ռիսկերը:

Վերոնշյալ պայմաններում ընկերության ղեկավարությունը մշտապես գնահատում է արտաքին միջավայրի ազդեցությունը և ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ ապահովելու գործունեության շարունակականությունը և ֆինանսական կայունությունը:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Կազմակերպության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը, Կազմակերպության գործունեության վրա կարող են տարբերվել Կազմակերպության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա:

26.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Ընկերությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Ընկերությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

26.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, հարկային մարմնի պարզաբանումներով, որոնք կարող են հակասական կամ տարբերեցումների տեղիք տալ: Հարկային մարմինները կարող են ստուգումների արդյունքում տույժ, տուգանքներ նշանակել: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների վրա: Սակայն հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե դրանք հաստատվեն, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

26.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենսդրության մեկնաբանություններն ապագայում են կարող են էական պարտավորություններ առաջացնել:

26.5 Դատական հայցեր

2025թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր չկան:

26.6 Երաշխավորություններ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ունի հետևյալ երաշխավորությունները

Պայմ. N	Գումար	Կնքման ամսաթիվ	Մարման ամսաթիվ	Փակման ամսաթիվ	Արժ.	Անվանում/ տրամադրող	Ապահ. պայմ.
N398279	38,252,730.00	15.03.22	08.06.26	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M23271
N3010407	7,700,000.00	24.09.25	08.07.27	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25052
N3010420	16,700,000.00	26.09.25	09.08.27	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25056
N3006093	6,008,060.00	04.04.24	08.06.26	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M24090
N3007630	70,000,000.00	23.08.24	23.08.29	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	L06329
N396005	16,812,860.00	24.09.21	08.06.26	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M23154
N3010748	30,000,000.00	08.12.25	02.06.26	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25196
N3003910	3,503,946.00	12.09.23	22.04.27	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M23774
N3004226	2,603,043.00	17.10.23	07.07.25	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M23889
N3009948	1,000,000,000.00	16.06.25	09.06.45	-	ՀՀ դրամ	ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՏՈՄԻ	0192
N393079	5,000,000.00	18.02.21	08.06.26	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M22977
N3004645	8,175,875.00	24.11.23	10.05.27	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M23920
N3009948	1,000,000,000.00	16.06.25	09.06.45	-	ՀՀ դրամ	ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՏՈՄԻ	L64952
N3009948	1,000,000,000.00	16.06.25	09.06.45	-	ՀՀ դրամ	ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՏՈՄԻ	996983
N3009948	1,000,000,000.00	16.06.25	09.06.45	-	ՀՀ դրամ	ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՏՈՄԻ	0190
N3009948	1,000,000,000.00	16.06.25	09.06.45	-	ՀՀ դրամ	ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՏՈՄԻ	0206
N395298	20,000,000.00	10.08.21	01.08.24	-	ՀՀ դրամ	ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՏՈՄԻ	V01036
N3010749	10,000,000.00	08.12.25	01.06.27	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25197
N397216	9,555,660.00	14.12.21	08.06.26	-	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M23219
N3009948	1,000,000,000.00	16.06.25	09.06.45	-	ՀՀ դրամ	ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՏՈՄԻ	0181
N3009948	1,000,000,000.00	16.06.25	09.06.45	-	ՀՀ դրամ	ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՏՈՄԻ	L68988
N3009948	1,000,000,000.00	16.06.25	09.06.45	-	ՀՀ դրամ	ԴԱՎԹՅԱՆ ԱՐՄԱՆ ԱՏՈՄԻ	C45750
N3010686	10,579,000.00	25.11.25	05.06.26	15.01.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25167
N3010725	17,691,000.00	03.12.25	09.06.26	15.01.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25182
N3010744	18,062,000.00	05.12.25	17.06.26	15.01.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25190

N3010726	15,083,000.00	03.12.25	09.06.26	15.01.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25183
N3010630	6,129,000.00	14.11.25	27.05.26	15.01.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25148
N3010685	19,253,000.00	25.11.25	05.06.26	15.01.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25166
N3010745	16,744,000.00	05.12.25	17.06.26	21.01.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25191
N3010418	50,000,000.00	26.09.25	22.07.26	05.02.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25055
N3010778	22,658,000.00	11.12.25	22.06.26	12.02.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25205
N3010779	73,098,000.00	11.12.25	22.06.26	24.02.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25206
N3010777	13,900,000.00	11.12.25	22.06.26	24.02.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25204
N3010776	16,456,000.00	11.12.25	22.06.26	24.02.26	ՀՀ դրամ	«ԱՐՓԱ- ՍԵՎԱՆ» ԲԲԸ	M25203

Պայմ.N	Գումար	Արժույթ	Կնքման ամսաթիվ	Գրավի առարկան
N2204886	24,000,000.00	ՀՀ դրամ	10.11.2021թ.	Վարկային երաշխավորություններ
N2238630	47,000,000.00	ՀՀ դրամ	14.04.2022թ.	Վարկային երաշխավորություններ
N2459943	17,000,000.00	ՀՀ դրամ	09.12.2025թ.	Վարկային երաշխավորություններ

27 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Ընկերությունն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում:

Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք բնորոշ են զարգացող շուկաներին: Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը ենթակա են տարբեր մեկնաբանությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառացած մարտահրավերներին:

Հայաստանի տնտեսության կայունությունն ու զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը վերահաստատել է իր հավատարմությունը լավ կառավարման սկզբունքներին, այդ թվում՝ հակակոռուպցիոն, թափանցիկության և հաշվետվողականության:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում սրվել է 2020թ. Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ հարյուր հազարից ավել արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

Ուկրաինայում պատերազմի արդյունքում շատ առաջատար երկարներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ ներառյալ

ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի նշանակալի առևտրային գործընկեր է, ուստի Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները, ինչպես նաև այդ պատժամիջոցների ուժգնացումը էական ազդեցություն են ունեցել Հայաստանի Հանրապետության տնտեսության և ֆինանսական շուկայի վրա:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Այդ հանգամանքը նպաստել է հայկական շուկա արտարժույթի ներհոսքի աճին, ինչը դրական ազդեցություն է ունեցել հայաստանի տնտեսության վրա, ինչի արդյունքում ընդհանուր փոխանցվել է երկնիշ աճ: Ընկերության ղեկավարությունը հետևում է տնտեսական ընթացիկ իրավիճակը: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ հուսալիորեն գնահատել վերջնական ազդեցությունը, որը կարող է ունենալ Ընկերության գործունեության վրա:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

28 Գործարքներ կապակցված կողմերի հետ

28.1 Գործարքներ մասնակիցների հետ

Ընկերությունը վերահսկվում է միակ մասնակցի կողմից:

Հազար դրամ	Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31- դրությամբ	2025թ.	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ
Տրված փոխառություն	1,091,166	(132,334)	306,684
Կրեդիտորական պարտքեր	-	(1,750)	1,750
վարձակալության գծով			-
	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ	2024թ.	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31- դրությամբ
Տրված փոխառություն	916,816	(146,989)	340,220
Կրեդիտորական պարտքեր	-	(6,000)	723,585
վարձակալության գծով			-

28.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	32,558	36,293
	32,558	36,293